

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻ

ՊՐԱՌՈՍԼԱՒ ԵԿԵՂԵՑԻ

Պրաւոսլաւ հոգեւորականների ապահովութեան խնդիր.

Այս խնդիրը, տառւմ է А. ЛУБЕНСКИЙ-ն «Россия»-ում (№ 1643), մեծ իշխան վարդապետից սկսած (որ եկեղեցուն տասանորդելու մասին կանոնադրութիւն էր տուել), մինչև մեր ժամանակը, թէ կառավարութիւնը և թէ եկեղեցին շատ անգամ այսպէս կամ այնպէս կամեցել են վճռել: Կիւսի և Մոսկովայի հին Ռուսաստանում հոգեւորականութիւնը պահպանուում է գլխաւորապէս յօժարակամ նուիրատուութեամբ: Տարին մի անգամ տներից հաւաքուում էին դրամ, հացահատիկ և այլ կենսական պիտոյքներ երկրի բերքերից և ստացուածքից: Հին Ռուսաստանը իւր պարզութեամբ և նահապետական կեանքով չէր վրդովուում: Եթէ քահանան ամբողջ ծուխի կամ ծխական անհատների հետ օրինակատարութեան համար սակարկութիւն էր անում:

Իշխաւոր ապահովութիւնը հոգեւորականութիւնը այնուամենայնիւ ստանում էր երկրից և ցասման ժամերից: Դրա համար էլ, երեւի, Ստոդլաւի ժողովը պատուիրում է մկրտութեան, խոստովանութեան, հաղորդութեան և թաղման համար ոչինչ չստանալ: Այս խորհուրդները, ժողովի կարծիքով, որ և է վարձատրութեան չեն հանդուրժի: Խռովութեան ժամանակի աւերածութիւններն ու երկրի ամեն տեսակ տնտեսական անյաջողութիւնները այս պայմաններում շատ տխուր կերպով ազդեցին հոգեւորականութեան վերայ: Որովհետև աղքատացած ժողովուրդը չէր կարողանում իւր ծխի հոգեւորականներին ապահովել և նա միշտ մնում էր ապրուստից զուրկ: Այս տխուր դրութեան մէջ դանուեց հոգեւորականութիւնը սինօզական ժամանակաշրջանումն էլ, երբ պատերազմների երեսից տնտեսական տագնապի մէջ՝ երկիրը քայքայման մօտ էր:

«Մեզ մօտ, Ռուսաստանում, գրում է Պօստշկովը,

գիւղական տէրտէրները (попы) կերակրուում են իրանց վաստակով և ոչ մի բանով հասարակ գիւղացուց չեն տարբերուում: Նրանք պետական թոշակ չունեն, երկրից ոչ մի տուրք չեն ստանում, և ինչով են ապրում՝ Աստուած գիտէ:

Սրանով էլ բաւական բացատրուում է օրինակատարութեան համար հոգեւորականութեան տուրքեր պահանջելու կարգի գոյութիւնը: Այդ պատճառով էլ, սկսած Մեծն Պետրոսից՝ եպիսկոպոսները, երբ ծխի վերայ քահանայ էին կարգում, ծխականներից ստորագրութիւն էին պահանջում այն հոգի քանակութեան մասին, որ պէտք է յատկացուէր ծխական հոգեւորականութեան, և տուրքի մասին, որ իւրաքանչիւր տարի պէտք է վճարուէր:

Ռուսաստանի վերանորոգողն էլ նկատեց հոգեւորականների ապահովութեան այս բոլոր անյարմարութիւնները: Դրա համար էլ հոգեւոր կարգադրութիւնը (րեգլամենտ) ի նկատի ունէր ծխական շտաներ մշակել և տուրքը փոխանակել իւրաքանչիւր օրինակատարութեան համար որոշ վճարով ժողովրդի կողմից՝ յօգուտ հոգեւորականութեան: Բայց այս ծրագիրը անիրագործելի մնաց և կառավարութիւնը ԺԸ. դարի ընթացքում՝ այդ խնդիրը չշօշափեց: Սակայն 1765 թուին Սենատը հետեւեալ սակագինը հաստատեց օրինակատարութեան համար, ծննդկանի «Փարատեա»-ի համար՝ 2 կօպէկ, մկրտութեան՝ 3 կօպէկ, հարսանիքի 10 կ. մեծի թաղման՝ 10 կ. փոքրի թաղման՝ 3 կօպ. իսկ խոստովանութեան և հաղորդութեան համար ոչինչ վեր չառնել, մաղթանքի և հոգեհանգստեան համար վեր առնել իւրաքանչիւրից՝ ըստ երկուստեք բարեհաճութեան: Այս հրամանը կախուած էր եկեղեցիներում՝ որ բոլորը գիտենան:

Այս սակագինը հոգեւորականութեանը անելանելի դրութեան մէջ թողեց. որովհետեւ ամբողջ ծխական հոգեւորականութեան համար տարուայ մէջ կարող էր միջին թուով 11—12 ռուբլի թղթադրամ (ասիգնացիա) գանձուել: Մինչդեռ ԺԸ. դարում ազնուականութեան մէջ կրթութիւնը, թէև մակերևոյթային, բաւական տարածուելով և

սկզբնական ու միջնակարգ ուսումնարանների բազմանալով՝ դէպի հոգեւորականութիւնը պահանջները աստիճանաբար սկսեցին մեծանալ։ Այդ բաների արտայայտութիւնը եղան բարեկարգիչների համար Պլատոնովեան հրահանգները, որոնցով քահանաները պարտաւորուում էին իրանց կոչման պատշաճ հագուստով, վերաբերուով և կօշիկներով և ոչ մուճակներով ման գալ, յարաբերութիւն և բարեկամութիւն ունենալ միայն իրանց աստիճանակից հոգեւորականների և ազնուատոհմ՝ կալուածատէրերի ու պատուարժան մեշտանների հետ. լաւ դաստիարակել իրանց զաւակներին, գրագիտութիւն սովորեցնել նրանց և յետոյ դպրոց տալ։ 1801 թուին Սինօգի ենթադրութեան համեմատ, ի նկատի ունենալով հոգեւորականութեան վերջին ծայր աղքատութիւնը, օրինակատարութեան համար Սենատի սակագինը կրկնապատկուեց։ Այս վերջին սակագինը, որ միջին թուով տարին 25 ռ. էր տալիս ծխական հոգեւորականութեան՝ մինչև այսօր էլ օրէնսդրական կարգով դեռ չէ փոխուել և իւր հրատարակութեան օրից սկսած երկար ժամանակ հակաճառութեան նիւթ է դարձել ծխական հոգեւորականութեան ու ծուխի միջև։

Թողնելով մասնաւոր միջոցները, որոնք վերաբերում են կայսերութեան սակաւաթիւ եկեղեցիներին, հարկ է կանգ առնել 1807 թուի յանձնաժողովի աշխատանքների վերայ։ Հոգեւորականութիւնը ապահովելու մեծ նախագիծը այդ յանձնաժողովին է պատկանում։ Այս յանձնաժողովը կարծում էր, որ իւրաքանչիւր տարի գանձարանից մի յայտնի գումար և եկեղեցու մոմավաճառութիւնից մի մասն յատկացնելով՝ կը կազմուի խոշոր դրամագլուխ, որի տոկոսով կարելի կը լինի բաւարարել հոգեւորականութիւնը և հոգեւոր—կրթական հաստատութիւնները։ Ծխական հոգեւորականութիւնը ռոճկի վերաբերութեամբ չորս կարգի էր բաժանուած, կրթական վարկի (ցենզ) համեմատ ամենաբիշը՝ 300 և ամենաբարձրը՝ 1000 ռ. սըրբազնագործ պաշտօնեաներին։ Վերահասնող հայրենի պատերազմների ծանր ժամանակը խանդարեց այս ծրագրի

գործադրութիւնը, 1815 թուին կազմուած դրամագլուխը հազիւ բաւականացաւ ապահովելու հոգեւոր կրթական հաստատութիւնները, և կարգաւորեալ ուժիկներ սահմանելու աստուածաբանութեան դոկտորներին, մագիստրոսներին և կանդիտատներին: 1817 թուին հոգեւոր դպրոցների մասնաժողովը Բարձրագոյն բարեհաճութիւն խնդրեց, որ գանձարանից ամեն տարի 2 միլիոն ուռքլի յանձնուի իւր արամագրութեան, մասնաժողովի այգպիսի գիմումին Բարձրագոյն «նախահոգ խնայողութիւն» յայտնուեց:

Տարեկան գումար տալու այս մի քիչ անհասկանալի մերժումն հարկադրեց Նիկոլայ Ա. կայսրի թագաւորութեան ժամանակ նորից հարց բարձրացնել հոգեւորականութեան ապահովութեան համար, որը ամենաաղքատ կեանք էր վարում ծխականների մեծամեծ պահանջների, զաւակների կրթութեան համար դպրոցներին վճարելու և կենսական պիտոյքների մեծ չափով թանգանալու պատճառով: Եւ ահա, 1830 թուին նորից սկսուում է գանձարանից յատկացուել ամենաաղքատ հոգեւորականների ապահովութեան համար սկզբում՝ 500,000 ռ.: Գիւղական հոգեւորականութիւնը ապահովելու համար դեռ 1742 թուի մտադրութիւնը քննելու համար կարգուած խորհրդակցական յանձնաժողովը 1842 թուին մշակում է յայտնի շտատը, որով քահանային յատկացուում է 100—180 ռ. սարկաւադին՝ 80 ռ. և փոխասացին՝ 40 ռ. տարեկան:


1842 թուից նորից տարեկան 415,000 ռ. է բաց թողնուում արեւմտեան 5 թեմերի հոգեւորականութեան ապահովութեան համար, իսկ 1843 թուին աւելացուում է մի միլիոն ուռքլի էլ 1842 թուի շտատի համեմատ՝ միւս թեմերի ամենաաղքատ հոգեւորականների թոշակի համար: 1844 և 1845 թուերին բաց թողնուած գումարին աւելացուում է դարձեալ 500,000 ռ. իսկ 1846—1860 թուերին՝ 100,000-ական ուռքլի տարեկան: 1862 թուին նոր գումար աւելացնելը դադարեց, և կառավարութիւնը սկսեց նոր միջոցներ որոնել հոգեւորականների դրութիւնը բարւոքելու համար: Բայց այս նպատակով կազմուած «տեղական հոգեւո-

րականութեան դործերի համար «առանձին տտեանը» իւր 23 ամեայ տխուր յիշատակի արժանի գործունէութեան ընթացքում ոչ մի միջոց չգտաւ հոգեւորականներին ազա- հովելու բացի եկամուտները կրճատելուց։ Առանձին տտեանի այդ անյաջող գործունէութեան պատճառները համարում էին տտեանի գլուխ կանգնած անձերի մանաւանդ ներքին գործերի նախարար Վալուեվի վերին աստիճանի անբա- րեացակամ վերաբերմունքը դէպի հոգեւոր գասակարգը։

Միայն 1893 թուին է նորից դարձնում հոգեւորա- կաններին ապահովելու խնդիրը։ Այս ժամանակից սկսած մինչև վերջին տարիները տարեկան բաց թողնուած գու- մարը մեծանում է 250,000-ից մինչև 500,000 ռուբլի, նա- յելով երկրի ֆինանսների դրութեան։ 1893 թուին Սինոդը որպէս միջին ճանապարհ նոր շտատ է կազմում, ուր քահա- նային նշանակուած է 300 ռ. սարկաւազին 150 ռ. և փոխա- տացին 100 ռ. տարեկան։ Բայց ամբողջ կայսրութեան մէջ այս միջին համեմատութեամբ ծխական հոգեւորականու- թեանը բաւարարելու համար 1911 թուին հարկաւոր է բաց թողնուած գումարին աւելացնել դարձեալ 9 միլիոն ռուբլի։ Յիրաւի, մի քանի ծայրերկրեայ թեմեր այժմ էլ օգտուում են բարձրացրած ռոճիկներով (Խոլմի, Վարչավայի, Թուր- քեստանի, Ֆինլանդիայի, Եակուտսկիի, Բլազովեչչենսկիի, Վլադիվոստոկի, մասամբ Կիեվի, Պոդոլի, Վոլինի, Մոգելիի, Լիտովի, Գրոգնի, Մինսկի և Պոլոցկի), սակայն կայսե- րութեան մէջ մօտ 11,000 ծխական հոգեւորականներ ոչ մի նպաստ չեն ստանում գանձարանից։

Այս դրութիւնը, ի հարկէ չէ կարելի բնական համարել։ Ժողովրդական յուզումները, և ամենատեսակ աղանդների զարգացումը ի նկատի ունենալով՝ անհրաժեշտ է այժմ քահանայի անկախութիւնն ու գործունէութեան ազա- տութիւնը ձիւի մէջ ապահովել։ Հարկադրուած լինելով խորհուրդները և օրէնքները կատարելուց առաջ սակարկու- թեան մէջ մտնել ծխականների հետ նա դրանով անկաս- կած աղարտում է իւր հովուական հեղինակութիւնը։ Այդ խնդրի լուծումն, որի վերայ տքնել են պետական այնքան

մարդիկ, գրած է Սինօդի կարգած առանձին խորհրդի պարտականութեան վերայ: Նա որ ծխական հոգևորականութեան ոռոգի համար շտատ է մշակում, պէտք է ցոյց տայ թէ կարող է որոնել տեղական աղբիւրներ հոգևորականութիւնը ապահովելու համար, պէտք որոշի ընդհանուր գումարի չափը, հոգևորականութեան ապահովութեան այս գործը գլուխ հանելու համար, և նպատակայարմար միջոցներ գտնի հոգևորականութեան և ծխի միջև ամեն տեսակ թիւրիմացութիւններ հեռացնելու համար:



ՕՐԹՈՂՈՔՍ ԵԿԵՂԵՅԻՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ

Տօմարի բարեփոխութիւն

Россія լրագիրը (№ 1633) գրում է.

Այժմ տիեզերական պատրիարքարանը զբաղուած է մի հարցով, որ արդէն առաջ մի քանի անգամ առիթ է դարձել պրաւօսլաւ զանազան եկեղեցիների միջև տարաձայնութեան, և այժմ նորից պրաւօսլաւ արեւելքի համար վէճերի դուռն է բաց անում. խօսքը Յուլիանեան տարեցոյցի բարեփոխութեան մասին է, տարեցոյցի, որը ինչպէս յայտնի է, կիրառութեան մէջ է արեւելեան եկեղեցիներում, և բացի դրանից, Թուրքաց կառավարութեան մէջ՝ դրամական գործերում:

Այս առիթով, ասում է լրագիրը, Կ. Պօլսոյ «Turquie» (Մարտի 11-ին ն. տ.) կարծում է, թէ այդ խնդիրը այժմ այն պատճառով է առաջ մղում, որ տիեզերական պատրիարքը ի նկատի ունելով վէճը, որ յառաջ է բերել այդ խնդիրը տիեզերական Սինօդում, պնդել է կազմել ուսումնական մի մասնաժողով՝ խնդիրը քննելու համար, դրանով մի անգամ էլ ապացուցանելով իւր լայն հայեացքը և իւր անկողմնակալութիւնը: Այդ մասնաժողովին կը յանձնուի ուսումնասիրել յուլիանեան և Գրիգորեան տօմարների միջև եղած տարբերութիւնները, և յայտնել իւր կարծիքը առաջինի ցանկալի փոփոխութիւնների վերաբե-

րութեամբ նրա՝ աստղաբաշխական իրականութիւնից հեռացած լինելու պատճառով:

«Հետաքրքիր է մատնանշել, ի միջի այլոց, և այն փաստը, որ պատրիարքի այս առաջարկութիւնը նոյն իսկ պատրիարքական Սինոդում սաստիկ դիմադրութեան է հանդիպել: Նրա անդամներից շատերը բուռն կերպով բողոքել են որ և է փոփոխութեան դէմ, յայտնելով, թէ բոլորովին անխորհուրդ բան է բարեփոխել յուլիանեան տօմարը և թէ, խնդրի ուսումնասիրութիւնը չի ունենալու ոչ մի գործնական արդիւնք: Ակամայ հարց է առաջ գալիս, ասում է լրագիրը, ինչ բանի վերայ են հիմնում, ներկայ դէպքում, բարեփոխութեան թշնամիները, կարելի է կանխօրէն ասել, որ առարկութիւնները ամենեւին դիտական բնոյթ չունեն: Բարեբաղդաբար, նոյն իսկ Սինոդում կան հոգևորական բաւական ներկայացուցիչներ, որոնք յայտնել են թէ խնդրի ուսումնասիրութիւնը փնաս բերել չի կարող, այդ տեսակ պատասխանը հնարաւորութիւն է. տուել մեծամասնութեանը ձայն տալ յօգուտ պատրիարքի առաջարկութեան և ուսումնական մասնաժողով կազմելուն ոմն Լիանօպուլօ-ի նախագահութեամբ: Այդ մասնաժողովին յանձնարարուած է արեւմտեան գիտնականների կարծիքն էլ հարցնել մտադրուած բարեփոխութեան համար:

«Մասնաժողովի տեղեկագիրը պատրիարքական Սինոդի վերջնական վճռին որպէս հիմք կը ծառայի: Սինոդը, սակայն, մինչև իւր վճիռը, ծանօթանալու է այս խնդրի առիթով միւս ինքնագլուխ (աւտօկեֆալ) եկեղեցիների կարծիքներին հետ:

«Մեր համոզմամբ, նկատում է լրագիրը, յատկապէս տիեզերական պատրիարքարանին է պատկանում դնել, այս խնդրի առիթով, որ և է հաստատուն որոշում, որովհետև առանց դրան ոչինչ չի արուի: Արժէ միայն յիշել մօտիկ ժամանակում նոյն իսկ պատրիարքի նախաձեռնութեամբ առաջարկուած այս հարցի առիթով ինքնագլուխ եկեղեցիների պատասխանները, որոնցից շատերը բացասական էին, և շեշտում էին, թէ յոյն-պրաւօսլաւ ժողո-

վուրդները դեռ «բաւական հասունացած չեն», այդ օրինակ բարեփոխութեան համար: Այդ առարկութիւնը, կարծում ենք, շատ էլ հիմնաւոր չի: Յամենայն դէպս, յուշիանեան տոմարի բարեփոխութեան հակառակօրդները կը համաձայնեն այն բանի հետ, որ գիտունները իրանց գիտութեան տուեալները կարող են մատակարարել ժողովուրդներին և ոչ թէ ժողովուրդները պէտք է իրանց ցանկութիւնները թելադրեն գիտութեան:

ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Եկեղեցիների նորոգութիւն կամ ընդարձակումն

Ռուսաստանում.

Ներքին գործերի նախարարութիւնը բացատարել է, որ կարկատանը կամ վերանորոգութիւնը կաթոլիկ եկեղեցական շինութիւններում կարող են կատարուել առանց քաղաքական իշխանութեան թոյլտուութեան. եթէ նոր շինութիւններ աւելացնելու բնաւորութիւն չեն կշռւում, որ աղօթողների մեծ թիւ բովանդակի: Վերջին դէպքում աշխատանքների թոյլտուութիւնը կախուած կը լինի ներքին Գործերի նախարարութիւնից: (Завказъ № 73)

Դենիսեվիչ Եպիսկոպոսի հրաժարեցումը.

Թագաւոր Կայսրը բարեհաճեց կարճել Մագիլիի հռովմէական կաթոլիկ կապիտուլի Մագիլիի կոնսիստորիայի պաշտօնեայ Դենիսովիչ Եպիսկոպոսի ռոճիկը: Միաժամանակ ներքին Գործերի նախարարը հրաժարեցրեց Դենիսովիչին իւր վերև յիշուած պաշտօնից ի նկատի ունենալով օրինազանցութիւնը, որ կապ ունի Ռուսաստանից հեռացուած եզուիտ Վիրցինսկու գործի հետ: 1908 թուին Դենիսովիչը օրէնքի հակառակ թոյլ էր տուել Վիրցինսկուն Մոսկվայում մի կրօնական ընկերութիւն կազմակերպել «Աղջկանց Մարիանեան Կոնգրեգացիա» անունով ընկե-

ընթացին կանոնադրութեան հաստատութիւն չհայցելով։ Դարձեալ նա թոյլ է տուել Մոսկվայի հռովմէական—կաթոլիկ ուսումնարաններում դաստիարակչութիւն ընդունել օտարահպատակ կրօնաւորութիւններին, որոնք պատկանում են Շամբերի Յովսէփի կոնգրեգացիային, մինչդեռ կրօնաւորութիւններ չունէին իրաւունք առանց Կառավարութեան թոյլտուութեան մինչև անգամ Ռուսաստանում ապրելու էլ 1907—8 թուերին Դենիսովիչը տուել է Մոսկվայի հռովմէական կաթոլիկ հոգևորականութեանը մի կարգ թոյլտուութիւններ, կաթոլիկութեան գիրկն ընդունել անչափահաս պրաւօսլաւներին, որոնք 34 տարեկան էին դարձել։ Նոյնպէս և միջոցներ ձեռք չէր առել Մագիլիի հռովմէական—կաթոլիկ Կոնսիստորիայի պահանջների վերաբերութեամբ։ Հներկայացնելով, ուր հարկն է, Մոսկվայի հռովմէական—կաթոլիկ ծխի ծխական գործերին վերաբերեալ տարեկան տեղեկագրերը (Кавказъ № 80).

— ❧ —

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Զիրարթարի անգլիական եպիսկոպոսի վանք

Լրագրները հաղորդում են, որ շոգեհաւի վերայ վախճանուել է Զիրարթարի անգլիական եպիսկոպոս Վիլիամը, 44 տարեկան հասակում, յուղարկաւորութիւնը կատարուել է Զմիւռնայի անգլիական մատուռի մէջ։ Ներկայ են եղել Զմիւռնիայի առաջնորդը, և Ուսումն. խորհրդի ատենապետ դոքտ. Թոփալեան։ Հանգուցեալը անգլիացի հայասէրներից էր, և մեծ համակրութիւն էր տածում դէպ ի մեր եկեղեցին։ Արարատի ընթերցողները կը յիշեն, որ նա մօտիկ ժամանակներս ուղարկել էր Մայր Աթոռս ի յիշատակ իւր՝ սկհւոյ ոսկեթել նուրբ ասեղնագործ մի քօղ։

Յ. Ա. Ե.

